



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«06» 05 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N° 057 - 24

Ձեռնարկողը՝

«ԳԼՈՄՄԱ» ԱԿ

ք. Երևան, Մաշտոցի պողոտա 51, բնակարան 30

Գործունեությունը՝

Մ.Գալշոյանի անվան թիվ 148 ավագ դպրոցի
կառուցման շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ
ք.Երևան, Արաբկիր վարչական շրջան, Սունդուկյան փողոց, 78 շենք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 057 - 24

«06» *Մայիս* 2024թ.

Մուշեղ Գալշոյանի անվան թիվ 148 ավագ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝ Փաստաթղթի տեսակը՝	«ԳԼՈՄՄԱ» ԱԿ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝ Գտնվելու վայրը՝	«Բ» կատեգորիա Երևան քաղաք, Սունդուկյան փողոց 78

Ներածական մաս. «ԳԼՈՄՄԱ» ԱԿ-ն նախատեսում է Երևան քաղաքի Սունդուկյան փողոց 78 հասցեում կառուցել Մուշեղ Գալշոյանի անվան 148 ավագ դպրոցը, որն իրականացվելու է դպրոցների «Սեյմիկ անվտանգության բարելավման» ծրագրի շրջանակներում՝ Ասիական Զարգացման Բանկի աջակցությամբ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության: Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների համար հիմք են հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N 07122012-01-1846, /ծածկագիրը՝ 01-003-0118-0004/, ճարտարապետա-հատակագծային առաջադրանքը՝ N01/18-07/2-Դ-106812-647, տրված՝ 13.09.2023թ.:

Հողամասերի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ անհատույց օգտագործման: Նախատեսվում է ապամոնտաժել գոյություն ունեցող դպրոցի շենքը՝ համաձայն Կառավարության N 87-Ա որոշման (06.02.2019), և նույն տարածքում կառուցել նորը: Հողամասը՝ ինժեներաերկրաբանական տեսակետից, բարենպաստ է կառուցապատման համար: Ընդհանուր մակերեսը կազմում է 1.20697 հա:

Նկարագրական մաս. Նախատեսվում է կառուցել Մ.Գալշոյանի անվան 148 ավագ դպրոցը 525 աշակերտի համար: Նախագծվող դպրոցի համալիրը բաղկացած է 7 մասնաշենքից (A-G), որոնք իրար հետ կապվելու են դեֆորմացիոն կարերով: Դպրոցի հատակագծային լուծումներում հաշվի են առնված ընդհանուր հոսքային դասարանների համար մասնաշենքեր, սպորտային և բազմաֆունկցիոնալ դահլիճներ, ադմինիստրատիվ մասնաշենքեր, նոր կաթսայատուն, բացօթյա մարզահրապարակ և խաղահրապարակ: Հիմնական բոլոր մասնաշենքերում նախատեսված են առանձին մուտքեր, որոնք ամեն ուղղությամբ ունենալու են 2 էվակուացիոն ելքեր: Դպրոցի հիմնական մուտքը նախատեսվում է Ավետիսյան փողոցից: «G» մասնաշենքը կունենա 560 մ² մակերեսով նկուղային հարկ:



Բոլոր մասնաշենքերը նախագծվում են միաձույլ երկաթ/բետոն կրող հիմնկամախքի իրականացմամբ, ներառյալ՝ շենքի հիմքերը, սյուները, հեծանները և միջհարկային սալերը: Նախատեսվող դպրոցի կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են՝

- Հողի ընդհանուր մակերես՝ 1.20697 հա:
- Շենքի կառուցապատման մակերես՝ 3725 մ²:
- Կանաչապատման մակերես՝ 2200 մ²:
- Անջրանցիկ մակերես՝ (մայթ, մարզահրապարակ և այլն)՝ 3470 մ² :
- Ստորգետնյա կառուցապատման մակերես՝ 560 մ²:

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական արտադրական ձեռնարկություններից:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան սալիկապատված հարթ և թեք ճանապարհներ, վերելակներ B և G մասնաշենքերում, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված սանհանգույցներ:

Դպրոցի նախագծում հաշվի են առնված ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման ցանցերի և օդափոխության համակարգերի ինժեներական լուծումները՝ ըստ ՀՀ շինարարական նորմերի:

Դպրոցը հագեցած է լինելու էներգաարդյունավետության և էներգախնայման համակարգերով: Տանիքներում տեղադրվելու են արևային վահանականեր՝ 126 հատ, որոնց արտադրած էլեկտրաէներգիան օգտագործվելու է դպրոցի կարիքների համար:

Շինարարության ընթացքում իրականացվելու է հիմքերի փորման աշխատանքներ: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 7844 մ³ ընդհանուր ծավալով փորման աշխատանքներ: Հանվող գրունտը կօգտագործվի որպես հետլիցք, որին կգումարվի 520 մ³ լրացուցիչ բերվող գրունտ (պահվող կույտի մակերեսը կտոփանվի՝ փոշեռոտաջացումը կանխելու նպատակով): Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ բուսահողի վրա ազդեցություն չի դիտարկվում, քանի որ նախագծվող դպրոցը կկառուցվի տարածքի արդեն իսկ հին դպրոցի շենքով յուրացված հատվածում, որտեղ բուսահողը բացակայում է: Կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ բուսահողը ձեռք կբերվի ՀՀ գործող օրենսդրության պահանջների համապատասխան: Բնառեսուրսներից օգտագործվելու է նաև ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, կենցաղային չտեսակավորված աղբն է՝ 5 կգ/օր և շենքի քանդումից առաջացած շինարարական աղբը՝ 8000 տոննա: Շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է համայնքի կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից: Նախնական ուսումնասիրությունների և գրականական տվյալների նույնականացման արդյունքում բուն նախատեսվող գործունեության իրականացման տարածքում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ չեն հայտնաբերվել: Տեղամասում մինչև 30 մետր խորության վրա ստորերկրյա ջրեր չեն հայտնաբերվել: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներից՝ կարստ, սողանք, քարաթափություն, փլուզում և այլն, բացակայում են հայցվող տարածքում: Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար: Ներկայացվել է բնապահպանական կառավարման պլան, որը պարունակում է բոլոր



փուլերում հնարավոր բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումներն, ինչպես նաև մոնիթորինգ իրականացման գործողություններ՝ ստուգելու շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը նախատեսվող մեղմացնող միջոցառումներին:

Պարզառարական մաս. Դպրոցի տարածքում առկա 49 ծառերից 12-ը կտեղափոխվեն, իսկ 37-ը կհատվեն՝ համաձայն «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոնի» եզրակացության, քանի որ ծառերը խոչընդոտում են դպրոցի մասնաշենքերի շինարարական աշխատանքներին: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի համաձայն՝ տնկվելու են 115 նոր ծառեր՝ 29 արևելյան թույա, 22 ակացիա, 29 հացենի, 16 հուդայածառ, 9 սոսի, 10 թխկի:

Շինարարության կազմակերպման և իրագործման աշխատանքների ժամանակ նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում իրականացնել պարբերական ջրցան,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացել փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- աշխատանքների ավարտից հետո մաքրել բոլոր տարածքները և առաջացած աղբը տեղափոխել համայքի կողմից հատկացված վայր
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից՝ աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ՝ խլացուցիչներ:

Դպրոցի կառուցման ընթացքում շինհրապարակում և շինհրապարակի հարևանությամբ նախատեսվում է իրականացնել մթնոլորտային օդում արտանետումների (փոշի, CO, NO_x) չափումներ, աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ, ինչպես նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումներ, որի ընթացքում կաչողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

Եզրափակիչ մաս. Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Մուշեղ Գալշոյանի անվան 148 ավագ դպրոցի հանրային ծանուցումը և քննարկումները իրականացվել են Արաբկիր վարչական շրջանում: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում: Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կլրեն



Ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝ փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

1. Գոյություն ունեցող դպրոցի շենքի քանդումն իրականացնել ՀՀ կառավարության (06.02.2019) «Անհատույց սեփականության իրավունքով գույք հանձնելու եվ քանդման (ապամոնտաժման) աշխատանքներ կազմակերպելու մասին» N 87-Ա որոշման համաձայն:
2. Դպրոցի շինարարության և շահագործման ընթացքում պահպանել «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը և ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 12-Ն հրամանի պահանջները:
3. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն բոլոր արտադրական վտանգավոր օբյեկտները (կաթսայատուն, վերելակ և այլն) օրենքով սահմանված կարգով ներկայացնել տեխնիկական անվտանգության փորձաքննության:
4. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11 հոդվածով սահմանված պահանջները:
5. Շինարարական աշխատանքների ընթացքում համաձայն՝ ՀՀ կառավարության 20.04.2002 թ. N 438 որոշման 43-րդ կետի, որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին:
6. Կանաչապատման և բարեկարգման աշխատանքներն իրականացնել Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված նախագծին համապատասխան:
7. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի համապատասխան վարչության հետ համաձայնեցված:
8. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի /մշտադիտարկումներ/ կառավարման պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԳԼԼՈՄԱ» ԱԿ-ի կողմից ներկայացված Արաբկիր վարչական շրջանի Սունդուկյան փողոց 78 հասցեում Մ.Գալշոյանի անվան թիվ 148 ավագ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
ատաջին կարգի մասնագետ



Սուսաննա Անտոնյան